

(immunité) տեւական և շարունակական չէ, և վերստին պատռաստումը, կրկնապատռաստումը միշտ օդակար է, որովհետեւ պատռաստի ոյժը 7 կամ 10 տարի է տեւում սովորաբար. Նրանից յետոյ պատռաստողը կարող է ծաղկով վարակւել. Արա համար մարդս պէտք է պատռաստի 7 տարին մի անգամ. մանաւանդ ծաղկի համաճարակ եղած ժամանակ :

ԴՈԿՏ. Կ. Յ. ՓԱՇԱՑԵԱՆ

### ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԱԾ

Կը արտնջեն Քրիստոնեաները,  
Ու տառապող ժողովուրդները կը ճշկուհան,  
Եւ կը հարցնեն.  
«Ո՞ւր է մեզի խոստացուած խաղաղութիւնը,  
«Ու մեր ոսկորները ե՞րբ պիտի հանգչին».  
Եւ կը ճշկուհան Քրիստոսի դէմ,  
Իրենց տառապանքներուն համար «վե՛րջ» աղաղակելով:

\* \* \*

Տիգրիսի հարաւային ափերուն վրայ  
Քաղղէացի հովիւները  
Բացօթեայ կանցընէին իրենց զիշերները երազանքի,  
Եւ ասաղերուն ընթացքը կը դիտէին,  
Ու ասաղերուն մէջ անցած դարձածը կը դիտէին:

Մեռեալ-Ծովուն արեւմտեան կողմը  
Երկիր մը կայ կենդանի.  
Ուր հին Նեղոսը կը նորոգուի ամէն տարի:  
Նեղոսի հովիտներուն մէջ չարքաշ ժողովուրդ մը  
Փրկութեան կըսալասէր յուսակառոյց:  
Ու եղան մարդիկ ատոնց մէջէն,  
Որ Նեղոսի ջուրերուն մէջ նայելով  
Գուշակութիւններ կընէին  
Եւ ասաղերուն ալ նայելով  
Քաղղէացի հովիւներուն տեսածները կը հաստաէին:

Եղիպառի մէջ մարդարէները  
Նեղոսի ջուրը կը նայէին,  
Եւ Բաբելաստանի հովիւները

Աստղերը դիտելով

Իրենց տեսածներուն վրայ երգեր կը յօրինէին .

— «Ահա ամպի պէս կելլէ ,

«Ու Անոր կառքը մըրիկի պէս է ,

«Արծիւներէն արագ են Անոր երիվարները» .

Ու կը տեսնէին հրեղէն անձ մը

Որ աստղէ աստղ կը ճամբորդէր :

\* \* \*

Ո՞վ յիմար ժողովուրդներ ,

Ո՞վ կարճամիտ հաւատացեալներ ,

Այդ երկնագունդի ճամբորդը

Եւ աստղերու այցելուն

Որմէ ձեր խաղաղութիւնը կըսպասէք

Եւ ձեր ոսկորներուն հանգիստը կըսպասէք :

Դեռ ինքը կոխւի մէջ է ,

Եւ ինքը խաղաղութեան կը կարօտի :

\* \* \*

Երկինքի մէջ Հօրը աջ կողմը նստած է .

— Կը պատուասիրուի Անիկա

Ու կը հանգչի Անիկա : Հրեշտակները կերգեն .

Եւ հրեշտակներուն երգը՝ յաղթութեան երգը չէ .

Անոնք խրախոյս կերդեն եւ ճառեր կը կարդան .

Պատերազմի ու չփոթութեան

Նախընթաց օրուան երգը կերգեն անոնք .

Եւ յաղթանակի օրուան նախատօնակը կը պատրաստեն :

Եւ Ան՝ որուն կառքը մըրիկի պէս է ,

Դեռ իր ճամբորդի հագուստովը

Եւ իր արիւնաներկ ցուպը ձեռքը

Բազմած է աթոռի մը վրայ ,

Զոր իրեն փոխ առւած են :

Ու Անիկա դեռ իր յաղթանակի պսակը չունի .

Ու իր արքայորդու գահը չունի :

Եւ Անիկա «Արքա» , «Հայր» կաղաղակէ .

Քի' չ մըն ալ միջոց խնդրելով հանգիստի :

Ու կուզէք որ Անիկա ձեզմով զբաղի ,

Երբ այնքան ուրիշ գործեր ունի կատարելու :

Ա՛յնչափ ուրիշ երկիրներ կան .

— Եւ անոնց բնակչութիւնները թիւ չունին ,  
Եւ այդ բնակչութիւնները չար են ,  
Մեր երկրին արարածներուն չափ չտր են :  
Ու Եհովային Որդին կը ճամբորդէ աստղէ աստղ ,  
Ու համաստեղութենէ համաստեղութիւն կանցնի  
Արծիւներէն արագ երիվարներով ,  
Ինչպէս տեսած էին  
Տիգրիսի աւազանին հովիւները  
Ու Եգիպտացի տեսանողները :  
Եւ ուր որ կերթայ Ան քարոզելու՝  
Հոն կը խաչեն զինքը , կը չարչարեն զինքը հոն ,  
Ու զինքը հոն կը մեռցնեն :  
  
Եւ ասիկա երկար շրջան մըն է  
Որ զեռ պիտի տեւէ բիւր դարեր .  
Եւ Աստուծոյ Որդին  
Տասն հաղար անդամ պիտի խաչուի :  
Ո՞վ Երկրին բնակիչնե՛րը ,  
Տանչուած աղգե՛ր , եւ արիւնլուայ ժողովուրդնե՛ր .  
Դուք ձեր գլխուն ճարը նայեցէք ,  
Կոռեցէ՛ք իրեն պէս ,  
Մինչեւ ա՛յն ժամանակը՝  
Երբ Էմմանուէլ իր Սուրբ Գործը աւարտած ,  
Իր այցելութիւններէն կը դառնայ Երկիր ,  
Արդարութիւն ընելու անիրաւուած ժողովուրդներուն :

Անգլիա

Խ . ԱՄԲԱՏ

## ԱՐԵՒԾ

Աստղերուն մէջ ամենէն աչքառուն , ամենէն ուշադրաւն է ապահովաբար՝ արեւը , որուն կենսատու ճաճանչներէն կախուած է մեր երկրագունադին կեանքը :

Լոյսի , ջերմութեան , շարժումի , կեանքի ու գեղեցկութեան անսպառ աղբիւրն է ան , որ դարերէ ի վեր մահկանացուներու խանդու ու երախաագէտ յարդանքները կը ընդունի :

Ռամիկը կը հիանայ անոր վրայ , որովհետեւ արեւին ամենաբարձր կարողութեան արդասիքը կը վայելէ ամեն օր : Գիտունը կը դնահատէ զայն , որովհետեւ տիեզերքի մէջ անոր անժիստելի կարեւորութիւնը